Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՎԻԼՍՈՆԻ «ԺԱՆՏԱԽՏԻ ՔԱՂԱՔԸ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Կար ժամանակ, որ ծաղկում էր
Մեր աշխարհքը անխըռով,
Աստծո տաճարն որոտում էր,
Թընդում էր տոն օրերով։
Աղմըկալի մեր դպրոցում
Երգում մանկունք մեր մատաղ,
Շողում էին լիքը հանդում
Սուր գերանդին ու մանգաղ։

Այժմ թափուր եկեղեցին,
Դպրոցը փակ, խըլացած,
Արտը կըծղած հանդի միջին,
Թավ պուրակը դատարկված.
Ու գյուղն էրված մի տան նըման
Կանգնած ավեր, ամայի,
Ո՜ղջ պապանձված, լուռ չի միայն
Դամբարանը ահռելի։

Մեռե՜լ, մեռե՜լ ամեն վայրկյան,
Ու ապրողներն Աստըծուն
Աղոթում են միաբերան

20 Նրրանց հոգուն փրրկություն։
Մեռե՛լ, մեռե՛լ ամեն վայրկյան,
Ու շիրիմներն իրար քով
Սարսափահար հոտի նման
Սեղմրվում են խիտ շարքով։

25 Գարուն կյանքիս եթե նույնպես
Վիճակված է վաղ շիրիմ,
Ով դո՛ւ, ում որ սիրել եմ ես,
Հոգուս անզույգ մրտերիմ,
Զրմոտենաս իմ շրթունքին
30 Քո համբույրով կենսաձիր,
Զրմոտենաս իմ դիակին,
Հեռվից հեռու հետևիր...

Ապա ձրգիր դու մեր գյուղը,
Փախիր այլուր, հեռացիր,
35 Հոգուդ տանջանքն ու երկյուղը
Վանիր էնտեղ ու կացիր։
Ու երբ կանցնեն էս օրերը,
Այց եկ շիրմիս գեթ մի հեղ,
Իսկ ես ոչ քեզ, ոչ քո սերը
Չեմ մոռանա և էնտեղ...